ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
# ԵՎ
# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

# Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ե*.**

1) բազմ-բանգ, օրըստօր-, հր-շ, դող-բոցք
2) ինչնից-, եղեր-բգ, գեղուղ-շ, ան-բկբա
3) ան-զբ, խուռն-բամ, երբև-, նախօր-
4) նրբ-բշիկ, լայն-զբ, լուս-բես, ան-ացում

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում դ.**

1) լյար-, Նվար-, դբ-ել, հար-աշաղախ
2) հաղոր-ել, վար-ապետ, խոր-անալ, հար-արել
3) անդա-բում, բուբ-, խոր-ուբորդ, զար-ուցիչ
4) անգայ-, ըն-արմանալ, լեր-անալ, վբ-ովել

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *իա*.**

1) հեք-աթային, առօր-կան, Մար-մ, ն-արդ
2) դաստ-բակ, իշ-ս, եղ-մ, կբ-
3) Սուք-ս, միմ-նց, բար-ցական, խավ-բ
4) օլիմպ-ական, Անան-, միլ-բդ, մում-

4 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա.**

1) հագենալ, աքցան, մրգառատ, օգնական
2) միգապատ, Սարգիս, ոքեկոչել, սայթաքել
3) ուրագ, ձիթաճրագ, պարգև, զուգել
4) վարակ, անհոգ, թագադրում, ճգնաժամ

5 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***գրտնակ*** - խմորը բացելու գլանաձև փայտ, ***ալոջ*** - էգ ուլ
2) ***ալմաստ*** - թանկարժեք քար, աղամանդ, ***կոդակ*** - ձկան տեսակ
3) ***գրչակ*** - վատ գրող, ***գետնամած*** - գետնին տարածված
4) ***ասպար***- պաշտպանական զենք, ***իմաստակ*** - խելացի մարդ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) ճշգրիտ արտահայտություն, բառերի հեղեղ, բազմաչարչար հող, փոքր հույս
2) սուր կսկիծ, արթնացող մտքեր, հարուստ գիտելիք, խոր զգացմունք
3) զվարթահայաց ընդունելություն, երկնածին մտքեր, խոր տարակուսանք, մեծ ափսոսանք
4) թեթև ծանոթություն, կամքերի առճակատում, նորակառույց եկեղեցի, թունոտ հայացք

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) մեծանուն, հանրահայտ, հռչակավոր, սնապարծ
2) հյուրընկալ, ասպնջական, վանատուր, վաղնջական
3) կասկածել, տարակուսել, երկբայել, երկմտել
4) թափառական, աստանդական, դյուրաշարժ, նժդեհ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) հակամետ, լուսամփոփ, դիմանկար, ձյունագես
2) նույնակարծիք, մազանոթ, ծաղկաշղթա, անդրադարձ
3) հոգեորդի, ոսկեվառ, դրամաշնորհ, կարեվեր
4) նկարազարդ, գեղաշուք, լեռնաշխարհ, չարախոս

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) վագր, համերգաշար, թռչնաբույն, մեծատուն
2) մեծատառ, անասնակեր, լրագիր, որսաշուն
3) տեսաշար, ծաղկանախշ, շարասյուն, ձկնկուլ
4) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար

10 **Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:**

1) փոստատուն, աստվածամայր, մանուկ
2) անկյուն, գարուն, որսաշուն
3) նուռ, կնքահայր, տուն
4) անուն, շարասյուն, լիություն

11 **Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդի գործածություն կա:**

1) Մանկությունս նման էր ափիս մեջ պահած ոսկեթև թիթեռի, որը չքացավ ակնթարթի պես:
2) Շողոքորթս եմ մեղավոր այս պատժի համար. պետք չէր խոնարհվել պաշտոնի համար:
3) Բախտս չի բերում. միշտ հանդիպում եմ նյութապաշտ գործընկերների:
4) Կյանքն անցողիկ է, աշխարհս՝ ունայն:

12 **Ածականներից քանի՞սը համեմատության աստիճաններ *չունեն*.**

*կարևոր, անաղարտ, արտասովոր, բոբիկ, ճաղատ, ապաշնորհ, կաղ, ամուրի, պճնամոլ, համր:*

1) վեցը
2) յոթը
3) չորսը
4) հինգը

| 13 | **Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են ցուցական:** |
|---|---|

1) ոմն, այսպիսի, նույնպես, այնտեղ
2) այդպես, այդչափ, մի, նույն
3) այս, դա, այսպես, բոլոր
4) մյուս, սույն, նույնքան, միևնույն

| 14 | **Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:** |
|---|---|

*Ի՞նչ ես գազազում, իմ վիրավո՛ր սիրտ:*

1) թերի
2) անվանական անդեմ
3) բայական անդեմ
4) անենթակա

| 15 | **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:** |
|---|---|

1) Գնահատում եմ արածդ և անչափ երախտապարտ եմ քեզնից:
2) Մի անգամ Մարգարը ինձ մոտ խոսեց օտարության մեջ գտնվող որդուց:
3) Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ տեսա:
4) Լուսնյակ գիշերներին հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին:

| 16 | **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:** |
|---|---|

*Ըստ լեգենդի՝ Եղիա մարգարեն ճանապարհ պիտի հարթեր ……. համար դեպի Աստված, և նրա ……. լեռները ……., և հարթ ճանապարհ պիտի բացվեր, բայց մարգարեի ձայնն անպատասխան …….*

(հրեա, կանչ, իջնել, մնալ)

1) հրեաների, կանչին, իջել էին, մնում է
2) հրեաների, կանչով, պիտի իջնեին, է մնում
3) հրեայի, կանչերից, իջել էին, է մնում
4) հրեայի, կանչերով, կիջնեին, մնում է

| 17 | **Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված ենթակա *չկա:*** |
|---|---|

1) Ովքե՞ր անցան ձեզանով,
   Ո՞ւր գընացին, ճամփանե՛ր:
2) Ողջը երազ է հիմա:
3) Մենք հանդիպեցինք…
   Եվ ի՞նչ կատարվեց, հասկացար արդյոք…
4) Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը…

| 18 |
|---|

**Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Ոտքը շեմից դուրս դնելուն պես ասես ջրվեժ խշշաց ականջներում:*

1) Մինչ ոտքը շեմից դուրս կդներ, ասես ջրվեժ խշշաց ականջներում:
2) Երբ որ ոտքը շեմից դուրս էր դնում, ջրվեժ խշշաց ականջներում:
3) Հենց որ ոտքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշշաց ականջներում:
4) Երբ ոտքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշշաց ականջներում:

| 19 |
|---|

**Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Դու արածներիդ մասին մտածի՛ր, թո՛ղ՝ ես էլ իմ գործը անեմ,- չթաքցրած հեգնանքով ասաց մտախոհ իշխանը եղբորը:*

1) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, ինքն էլ իր գործը անի:
2) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով ասաց եղբորը, որ նա իր արածների մասին մտածի, թողնի՝ ինքն էլ իր գործը անի:
3) Իշխանը չթաքցրած հեգնանքով մտախոհ ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
4) Մտախոհ իշխանը չթաքցրած հեգնանքով եղբորն ասաց, որ ինքը իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:

| 20 |
|---|

**Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
2) Հարևան մի կին մի օր իր ծանոթներին հայտնեց թե Իվան բեյը ցնդածի պես է դարձել նա ինքնիրեն շարունակ ժպտում է ձեռքերը մոտեցնում սառը վառարանին ու իրար շփում:
3) Ամբողջ գյուղն այդ գիշեր դուրս էր թափվել բայց արդեն ուշ էր խրճիթը վառվում էր նավթոտ փալասի պես:
4) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:

**21** **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հետագայում անսովոր երևույթները գրավել են Կալիֆոռնիա այցելող զբոսաշրջիկների կամ նույն վայրում ամառանոց կառուցող ինժեներների ուշադրությունը: Այստեղ մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվացել, իսկ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնել, թեև հարթաչափը բազմիցս ցույց է տվել ուղիղ հարթություն:
2. Վերջին տարիներին կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նման վայրեր կան երկրագնդի տարբեր տեղերում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հայտնաբերելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ նման անոմալիաները գործում են խիստ սահմանափակ տարածքներում:
3. Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով:
4. Մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկը, որն առաջին անգամ բացահայտել են դեռ հնդկացիները, գտնվում է Կալիֆոռնիայում. այստեղ ֆիզիկայի մի քանի օրենքներ պարզապես չեն գործում, քանի որ գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, առարկաները, որոնք պետք է կանգնեն ուղիղ, անկյամբ թեքված են գետնի վրա, իսկ մարդիկ կարող են քայլել պատերով:

1) 4, 2, 1, 3
2) 3, 4, 1, 2
3) 4, 2, 3, 1
4) 3, 2, 4, 1

**22** **Տրված հատվածներից որո՞վ է սկսվում Մովսես Խորենացու «Ողբը»:**

1) «Վարդապետները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատվի արժանացած և ոչ թե Աստծուց կոչված, արծաթով ընտրված և ոչ թե Սուրբ Հոգով»:
2) «Մեզ տիրել են խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր ու դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ տալիս»:
3) «Ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս… Ո՞վ պետք է այսուհետև հարգի մեր ուսումը, ո՞վ պիտի ուրախանա իմ՝ իր աշակերտի առաջադիմությամբ…»:
4) «Ողբո՜ւմ եմ քեզ, Հայո՛ց աշխարհ, ողբո՜ւմ եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ»:

**23** **Նշվածներից ո՞րը Գրիգոր Նարեկացու տաղերից *չէ:***

1) «Տաղ անձնական»
2) «Տաղ Հարության»
3) «Տաղ Վարդավառի»
4) «Մեղեդի ծննդյան»

**24** **«Սասունցի Դավիթ» էպոսում ինչո՞ւ է Դավթի ձեռքի Խաչ պատերազմին սևանում:**

1) Հովիվներին խոստացել էր վանքից հարիսա բերել, բայց 40 ավազակների դեմ կռվի մեջ մտնելով՝ մոռացել էր:
2) Երդվել էր մարտի ելնել Պղնձե քաղաքի թագավորի թշնամիների դեմ և ազատել նրան հարկից, բայց խոստումը դրժել էր:
3) Խոստացել էր փահլևաններին ամուսնացնելուց հետո շտապ դառնալ Խանդութի ու զավակի մոտ և ուշացել էր:
4) Երդվել էր յոթ օրից վերադառնալ Չմշկիկ Սուլթանի մոտ, որ կռվեն, և մոռացության էր տվել:

**25** **Նահապետ Քուչակի «Ժամ-ժամ զիմ ղարիպութիւնս» հայրենում քնարական հերոսը ինչի՞ հետ իրեն *չի* համեմատում:**

1) աղեղի
2) կռունկի
3) ջրի
4) նետի

**26** **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում ո՞վ է իր կալվածքները փոխանակում աբխազների հետ և հեռանում Հայոց աշխարհից:**

1) Ցլիկ Ամրամը
2) Աշոտ Բռնավորը
3) Սահակ Սևադան
4) Հովհաննես կաթողիկոսը

**27** **Ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադում արծարծված հիմնական գաղափարը:**

1) հավերժական սիրո ձգտումը
2) գործի անմահության գաղափարը
3) մերժված սիրո տառապանքը
4) կյանքի անցողիկությունը

**28** **Խոսքերից ո՞րը Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի նշված հերոսներից որինն է:**

1. «Այդ եկեղեցին շիներ ենք մեզի համար, մեր սիրո Աստծուն համար»:
2. «Ձիս ու սուրս թե հերքի չեկավ, կուտայի քեզի և աղջիկս»:
3. «Այն Հովհաննեսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթե ծերունի մը, հեռու արքունիքեն ու ամենքեն…»:
4. «Իջե՛ք, իջե՛ք, երազներ, իջե՛ք զգո՜ւյշ, երազներ…»:

ա. Քողավոր
բ. Իշխան
գ. Իշխանուհի
դ. Վանահայր

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

29 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Անց եմ կենում. շուրջս-մարդիկ, շուրջս դեմքեր հազար-հազար.*
*Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար...*

1) «Դանթեական առասպել»
2) «Տաղ անձնական»
3) «Գանգրահեր տղան»
4) «Հեռացումի խոսքեր»

30 **Հատվածներից ո՞րը Հովհաննես Շիրազի որ բանաստեղծությունից է:**

ա. Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ՝ չգիտեմ՝ կա՞ թե՞ չկա
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:
բ. ...Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,
Եվ մամռած նայե իմ Արարատին:
գ. -Ի՜նչ թարմություն- ասացին,- ի՜նչ թարմություն, ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես՝ իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին…
դ. Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
…Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան...

1. «Կուզեի նստել մի քարի վրա»
2. «Թագադրում»
3. «Հայ ժողովրդի երգը»
4. «Գարնանամուտ»

1) ա-3, բ-1, գ-4, դ-2
2) ա-1, բ-3, գ-4, դ-2
3) ա-3, բ-4, գ-1, դ-2
4) ա-2, բ-3, գ-4, դ-1

31 **Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:**

ա. Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ ետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:

բ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ:

գ. Ուշ-ուշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Բայց ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

դ. Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:

1. Հ. Սահյան
2. Պ. Սևակ
3. Ե. Չարենց
4. Հ. Շիրազ

1) ա-4, բ-1, գ-2, դ-3
2) ա-4, բ-2, գ-3, դ-1
3) ա-1, բ-3, գ-2, դ-4
4) ա-2, բ-1, գ-4, դ-3

32 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝*
*Հայտարարվում է և օրենքից դուրս:*
*Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.*
*Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...*

1) «Վարք մեծաց»
2) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
3) «Մարդ էլ կա, մարդ էլ»
4) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»

33 **Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.**

***վիաստ*** խոսքեր, ***ոսկի*** արտեր, ***երերում*** քայլվածք, ***բարձր*** ծիծաղ, ***ցնորք*** աղջիկ, ***մեռնող*** արեգակ, ***ճիրհող*** դաշտեր:

34 **Տրվածներից քանիսո՞ւմ են բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները գրվում մեծատառով.**

ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ՏԻԿԻՆ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՏԱՎՐՈՍ ԼԵՌ, ԳԵՏԱՌ ԳԵՏԱԿ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ:

35 **Բառերից քանի՞սն են հոդակապով.**

լուսանցք, բառախաղ, վայրէջք, ինքնաեռ, գինեմոլ, հարսնատես, սներես, լուսաշող, այրուձի, մարդանման:

36 **Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

ինչո՞ւ, նույն, այդպիսի, այսպես, յուրաքանչյուր, ոմանք, երբևիցե, մեկը, որևէ, սույն:

37 **Տրվածներից քանի՞սն են անորոշ դերբայ.**

ուռչել, համապատասխանեցնել, հուսահատեցրել, թվացել, անզգայացել, կոնկրետանալ, դարձել, դառնալ:

38 **Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ՝ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար...
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ:

39 **Դասավորել համարները՝ ըստ Ավետիք Իսահակյանի «Աբու–Լալա Մահարի» պոեմի տողերի հաջորդականության:**

1. Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝ օրորվում էին ճամփեքի վրա
2. Ծիածանաթև հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով
3. Մեխակի բույրով հովն էր շշնջում հեքիաթներն հազար ու մի գիշերվա
4. Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շքեղ գինդերով

40 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. գազալցակայան, 2. վարդազգի, 3. գահավեժ, 4. զեկույց, 5. զինապահեստ, 6. բազպան, 7. խոսափող, 8. անզգուշաբար, 9. տարկետում:

41 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. աստծու կրակ - աչքի սուրմա թռցնող
2. փորացավ ունենալ - անվանը մուր քսել
3. ով հարս, նա հարսնաքույր - անպոչ գդալ
4. ինքն իրեն մոռանալ - համը դուրս գալ

42 **Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. հնչել, 2. մրոտվել, 3. դիպչել, 4. աղտոտել, 5. հասկանալ, 6. դիմադրել,
7. թոցնել, 8. շուռ գալ, 9. գահակալել:

43 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

*Ամառային գիշեր էր. Ոսկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավ այն խրճիթի լուսամուտի տակ, որտեղից առկայծում էր բեկբեկուն լույսը:*

1. **լուսամուտի տակ** – տեղի պարագա, **որտեղից** – տեղի պարագա
2. **առկայծում էր** – պարզ ստորոգյալ, **բեկբեկուն** – որոշիչ
3. **ամառային** – որոշիչ, **գիշեր էր** – պարզ ստորոգյալ
4. **Ոսկանը** - ենթակա, **կանգ առավ** - բաղադրյալ ստորոգյալ
5. **այն** – որոշիչ, **խրճիթի** – հատկացուցիչ

44 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածները *չպիտի* կետադրվեն:**

1. Մի վայրկյանում շոգի դառնալով ջուրը ավելի էր բորբոքում կրակը:
2. Հոգնած երկար ճանապարհից հեծյալը իջավ ձիուց և նստեց ծառի տակ:
3. Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր:
4. Լառ-Մարգարի համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր:
5. Ներս մտավ Շուշանիկը դաշտային ծաղիկների մի փունջ բռնած:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Հետադաս որոշիչը միշտ արտահայտվում է բառակապակցությամբ:
2. Որոշիչը կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով:
3. Որոշիչը կարող է արտահայտվել անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ դերանուններով:
4. Որոշիչը չի կարող հանդես գալ բառակապակցությամբ:
5. Որոշիչը կարող է հանդես գալ կապական կառույցներով:
6. Որոշիչը կարող է արտահայտվել հարակատար և համակատար դերբայներով:

## Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

*Քիչ հե-վում (1)՝ ու-իղ (2) իմ դիմաց, Արարատն է՝ մեր պատմության մեծ որ-ն (3) ու տա-ագիրը (4): Ալ-արս (5) այս լեռը երևի աշխարհի ամենաբարձր սարն է. հայ մարդուն նա երևում է աշխարհի բոլոր ծա-երից (6): Տա-ական (7) ճշմարտություն է. կարոտում են հարազատին: Դեռ չեմ լսել, որ որև- (8) թուրք կարոտի այս սարին: Իսկ հեռվում ու-աբերձ (9) բարդիների կատարներին թևածող արագիլները սաստկացնում են հոգու- (10) ցավը:*

1) 1-ռ, 2-ղ, 3-բ, 4-ր, 5-եվ, 6-գ, 7-րր, 8-է, 9- ղղ, 10-դ
2) 1-ռ, 2-ղղ, 3-փ, 4- ր, 5-եվ, 6-կ, 7-րր, 8-է, 9-ղ, 10-տ
3) 1-ր, 2-ղ, 3-բ, 4-րր, 5-եվ, 6-գ, 7-ր, 8-ե, 9-ղղ, 10-դ
4) 1-ռ, 2-ղ, 3-փ, 4-րր, 5-և, 6-կ, 7-ր, 8-ե, 9-ղ, 10-տ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկը *չի* շեշտվում.**

1) գրեթե, դառը, կարծիքդ, դասարանը
2) երկրորդ, բուռն, գոնե, ուժ տալ
3) հեռուստացույց, գրքերս, թագավորի, ընկերական
4) ամենուրեք, անգդ, արծաթե, նույնքան

48 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.**

1) ՄՆՁԱ-2481
2) ՐՆԼԷ -5327
3) ՉՁԶ- 785
4) ՓՋԽԴ -8934

49 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ես քեզ մոտ եմ եկել այն հույսով, որ ինձ նեցուկ կլինես այս դժվար պահին:
2) Անցյալ անգամ ես իմ գոհունակությունը ասացի այս նախագծի մասին և այսօր էլ կրկնում եմ:
3) Փոխանակ տքնաջան աշխատելու և պարապելու՝ ողջ օրը անգործ թափառում է:
4) Հեռվից լսվում էր փոթորկված ծովի ալիքների հզոր շառաչյուն:

50 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.**

1) **աչքերը կապել** – խորամանկությամբ խաբել, **աչք դնել** – հավանել
2) **աչքն ուտել** – մի բան հավանել, **աչքերը խավարել** – կուրանալ
3) **ականջը գցել** – տեղեկացնել, **ականջը ծանր** – լսողությունը թույլ
4) **ականջը դռանը** – անհամբեր որևէ լուրի սպասել, **թևերը կտրել** – հեռու վանել

51 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) ստնտվություն - ***ստտ, տու***՝ արմատներ, ***ություն***՝ վերջածանց
2) հետաքննիչ - ***հետ, քնին***՝ արմատներ, ***իչ***՝ վերջածանց, ***ա***՝ հոդակապ
3) հեղուկազրկում - ***հեղ, զուրկ***՝ արմատներ, ***ուկ, ում***՝ վերջածանցներ, ***ա***՝ հոդակապ
4) սննդամթերք - ***սուն, մթեր***՝ արմատներ, ***ունդ, ք***՝ վերջածանցներ, ***ա***՝ հոդակապ

52 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **գորշ** օրեր - **գորշ** վերարկու
2) **շահ** ստանալ - պարսից **շահ**
3) **ակնարկ** նետել - **ակնարկ** տպագրել
4) գետի **ափ** - ձեռքի **ափ**

53 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Աննան քաղաքի փողոցներում վախից, անհանգստությունից մոլորվել էր:
2) Հաճի աղան տեսել էր ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հետ էր մղվում:
3) Նուշիկը երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է, հաց է ու խորոված կարտոֆիլ:
4) Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա, նա սթափվեց և բեռը շալակին՝ վերադարձավ յուրայինների մոտ:

54 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ըղձական եղանակով:**

1) բերեմ, ուտեմ, հարցնեմ, ասեմ
2) չգայի, ընդունվի, հարգեր, լսվեին
3) չբերեմ, չեմ բերի, չգրեիր, խոսեմ
4) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային

55 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:**

1) Զարթնում էր Պետին, տան **առաջ** հոսող առվակի ջրում երեսը լվանում:
2) Քանի՜- քանիսն անցան քեզ պես, քեզնից **առաջ,** քո **առաջ:**
3) Կինը նստել էր օջախի **առաջ,** հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին:
4) Առանց հապաղելու **առա՛ջ** գնա, ամեն ինչ դեռ առջևում է:

56 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

1) Լինել **թե** չլինել այս է խնդիրը:
2) Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը
**Թե** օդի է թափվում իմ թմրած ուղեղին:
3) **Թե** Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում
Ասեք նրան Չարենցն ասավ մնաս բարով մնաս բարով:
4) Սոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել **թե** պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին Դիլան դային չիմացավ:

**57** **Գործիական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:**

*Համր քայլերով դարերն են անցնում,*
*Արտույտը երգում է իր գովքը գարնան:*

1) միջոցի անուղղակի խնդիր
2) ձևի պարագա
3) ժամանակի պարագա
4) ներգործող անուղղակի խնդիր

**58** **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

1) *Եթե կորցնում ես խիղճդ, վերածվում ես մի սովորական գազանի:*
   Խիղճդ կորցնելու դեպքում վերածվում ես մի սովորական գազանի:
2) *Երբ հյուրերը գնացին, կինը մենակությունից լաց եղավ:*
   Հյուրերի գնալուց հետո կինը մենակությունից լաց եղավ:
3) *Երբ դողանջում են եկեղեցու զանգերը, հավատացյալները գնում են աղոթքի:*
   Եկեղեցու զանգերը դողանջելու ժամանակ հավատացյալները գնում են աղոթքի:
4) *Երբ խոսում էին Արայի մասին, Աննան ոտքից գլուխ կարմրեց:*
   Արայի մասին խոսելուց Աննան ոտքից գլուխ կարմրեց:

**59** **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Այն լուրերը, թե ծովանկարիչը ստեղծել է արտասովոր մի նկար, արագորեն հասան Պետերբուրգ:
2. Վախենում էր արքային տեղեկացնել, որ ազդեցիկ մի քանի նախարարներ, ծեծելով հարկահաններին, հրաժարվել էին արքունի տուրքերը վճարելուց:
3. Նրանք դեռ կիրճը չէին անցել, երբ թիկունքից աղաղակներ լսվեցին:
4. Թվաց, թե այդ ամենը չի եղել, ու ես մղձավանջային երազի մեջ եմ:

ա. ենթակա
բ. ուղիղ խնդիր
գ. վերաբերության խնդիր
դ. ժամանակի պարագա
ե. որոշիչ

1) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
2) 1–ե, 2–բ, 3–դ, 4–ա
3) 1–գ, 2–բ, 3–ա, 4–դ
4) 1–ե, 2–ա, 3–դ, 4–բ

**60** **Նշվածներից ո՞րը *չի* կարող դրվել բացառական հոլովով:**

1) հանգման խնդիրը
2) գոյական որոշիչը
3) ներգործող խնդիրը
4) մասնական բացահայտիչը

61 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Զրաղացը, թվում է, անուշ հեքիաթ էր պատմում իմ մանկության մասին:
2) Ինչ էր ուզում դրանով ասել՝ այդպես էլ չհասկացա:
3) Իսկ Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
4) Այն զգացումները, որոնք հատուկ են բոլորիս, ամենևին գոյություն չունեին նրա համար և մեղադրել նրան դրա համար անիմաստ էր:

62 **Նշվածներից ո՞րը հայ հին և միջնադարյան բանահյուսության ժանրերից *չէ:***

1) առասպել
2) շարական
3) էպոս
4) առակ

63 **Ո՞ր շարքում նշված բոլոր հեղինակներն են սփյուռքահայ:**

1) Վազգեն Շուշանյան, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան
2) Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց, Հակոբ Պարոնյան
3) Կոստան Զարյան, Միսաք Մեծարենց, Հակոբ Օշական
4) Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Մուշեղ Իշխան

64 **Հովհաննես Թումանյանի նշված ստեղծագործություններից քանի՞սն են բանաստեղծություն:**

«Հայոց վիշտը», «Հոգեհանգիստ», «Հառաչանք», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Անուշ»:

65 **Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.**

սրտագին, արարչագործ, ծնունդ, կպչուն, հնչեղ, կուտակել, տխրություն, լծորդ, փախստական, ակնթարթ, փափկել, հեռաստան:

66 **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

փոխաբերություն, մակդիր, շրջադասություն, հակադրություն, համեմատություն, հանգավորում:

Սարերի ծոցից սարեր են ծլում,
Շարժվում են կարծես սարերը տեղից,
Ծառն իրենից մեծ ստվեր է ծնում,
Եվ օրը արդեն գնում է ձեռից:

67 **Ո՞ր նախադասություններում է ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված:**

1. Պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը **որպես բեռ** քաշող մի քանի պատանիներ էին: *(մասնական բացահայտիչ)*
2. Հետո անձրև սկսվեց, և անձրևի առաջին կաթիլների հետ անջրանցիկ **կտորով** ծածկեցին ցորենը: *(միջոցի անուղղակի խնդիր)*
3. Եվ աստծուն լսելի եղան Խայամի **տրտունջն ու հանդիմանությունը:** *(ենթակա)*
4. Իշխանը ձին ասպանդակեց ու արագ հեռացավ **այդտեղից:** *(անջատման անուղղակի խնդիր)*
5. Աղջկա հետևից հասանք, և **ամեն ինչ** պարզ դարձավ մեզ համար: *(ենթակա)*
6. Երկար խոսեցին այդպիսի **վերաբերմունքի շուրջ** ու ոչ մի եզրակացության էլ չեկան: *(վերաբերության անուղղակի խնդիր)*

68 **Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.**

1. կամովին, 2. կամային, 3. թուլակազմ, 4. կամկար, 5. թուլամորթ, 6. անտեղյակ:

69 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

*Մի բան, ինչ ես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:*

1. **երբեք** – ժամանակի մակբայ, **չէր տալիս** – անկանոն բայ, անկատար անցյալ
2. **հազվագյուտ** – ձևի մակբայ, **շնորհ** – գոյական, ուղղական հոլով
3. **ինչ** – ստորադասական շաղկապ, **ես** – անձնական դերանուն, ուղղական հոլով
4. **այդ** – ցուցական դերանուն, **սիրում էի** – պարզ բայ, ներգործական սեռ
5. **մարդու** – գոյական, **ու** հոլովում, **մեջ** –կապ, հետադրություն

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի կազմում գտնվող ***որ, երբ, ինչպես, ուր*** և այլ դերանունները պարտադիր հարաբերական դերանուններ են:
2. Եթե բարդ նախադասության բաղադրիչ նախադասության կազմում կա ստորադասական շաղկապ, ապա այդ նախադասությունը ստորադաս է:
3. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց կարող են կապակցվել թե՛ շաղկապներով, թե՛ առանց շաղկապների:
4. Բարդ նախադասություններ են երկու և ավելի ստորոգում ունեցողները:
5. Երկրորդական (ստորադաս) նախադասությունները հաճախ փոխարինում են գերադաս նախադասության որևէ անդամի:
6. Բոլոր բարդ նախադասությունները փոխակերպվում են պարզի: